ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

9.01.2020
344-19

ՀՀ շրջակա միջավայրի
նախարար պարոն Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դեկտեմբերի 11-ին տեղեկություն ստանալու հարցում էր (N-343-86) ուղարկել Շրջակա միջավայրի նախարարություն՝ խնդրելով ներկայացնել մանրամասներ այն դրամաշնորհային ծրագրի մասին, որի շրջանակում մշակվել է 2019 թ.-ի դեկտեմբերի 2-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am-ում, տեղադրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: 2019 թվականի դեկտեմբերի 25-ին Շրջակա միջավայրի նախարարությունը ուղարկել է պատասխան գրություն՝ նշելով միայն ծրագրի մասին մի հոդում: Ավելի ուշ՝ դեկտեմբերի 30-ին, նախարարությունն ուղարկել է լրացուցիչ պատասխան գրություն, որով տրամադրվել են հարցերի միայն մի մասի պատասխանները. հարցման որոշ կետերի վերաբերյալ լիարժեք տեղեկություններ այդպես էլ չեն տրամադրվել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ԻԱԿ-ի հարցման՝ *«Տրամադրեք Շրջակա միջազվայրի նախարարության պաշտոնական կայքի հղումը, որով կարող ենք գտնել Նախարարության կողմից իրականացվող «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱԶԾ ծրագրի մասին ամփոփ տեղեկություն»* երկրորդ հարցին ի պատասխան Նախարարության գրության մեջ նշված է *«Շրջակա միջավայրի նախարարությունում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ տեղի է ունեցել հանրային քննարկում, սակայն նախարարության պաշտոնական կայքում չի տեղադրվել տեխնիկական խնդիրների պատճառներով»*:

Խնդրում ենք, ուշադրություն դարձնել, որ հարցման այս կետը վերաբերում է ոչ թե հանրային քննարկման մասին տեղեկությանը, այլ «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱԶԾ ծրագրին: Ուստի խնդրում ենք տրամադրել *«Գլոբալ*

բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱԶԾ ծրագրի մասին ամփոփ տեղեկություն:

2. Հարցման 3-րդ և 5-րդ հարցերին ի պատասխան գրության մեջ նշվում է, որ տեղեկությունը կցվում է, այնինչ պատասխան գրությանը կից լրացուցիչ տեղեկություններ չկան:
3. ԻԱԿ-ի՝ *«Տրամադրեք պատասխան գրության մեջ նշված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի փորձագիտական վերլուծության պատճենը և/կամ հղումը»* հարցին ի պատասխան Նախարարության պատասխան գրությամբ անդրադարձ է կատարվել իրականացված վերլուծությանը, սակայն չի տրամադրվել ոչ վերլուծությունը և ոչ էլ հղում, որով հնարավոր կլինի գտնել այն: Խնդրում ենք տրամադրել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի փորձագիտական վերլուծության պատճենը և/կամ հղումը:
4. Խնդրում ենք տրամադրել այն փորձագետների ցանկը, որոնք մշակել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի փորձագիտական վերլուծությունը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան